Հայտերի ներկայացման հրավեր

Հայաստանի Հանրապետություն

08 Սեպտեմբերի , 2016 թ.

Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագիր

Վարկ No 5398

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ # SPAP II W- **1.1.1/1.e**

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ՀՄՇՏԿ վերակառուցում և վերանորոգում

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է ֆինանսավորում Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագրի համար և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել "**ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀՄՇՏԿ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ և ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ**" պայմանագրի շրջա նակներում վճարումներ իրականացնելու համար:

2. Սույնով ՀՀ ֆինանսների նախարարության Արտասահմանյան Ֆինասնավորման Ծրագրերի կառավարման կենտրոնը հրավիրում է ներկայացնել կնքված փաթեթներ իրավասու մասնակիցներից՝ **Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ՀՄՇՏԿ վերակառուցման և վերանորոգման** համար:

3. Մրցույթն իրականացվելու է Ազգային մրցակցային մրցույթի միջոցով, համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «*Ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՄԶՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառուների կողմից*» Հունվար 2011 թ. վերանայված Հուլիս 2014 թ. «Գնումների ուղեցույցներ»: Բացի այդ, խնդրում ենք ծանոթանալ նաև 1.6 և 1.7 ենթակետերի հետ, որոնք սահմանում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

4. Շահագարգռված իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ Արտասահմանյան Ֆինասնավորման Ծրագրերի կառավարման կենտրոնից և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը աշխատանքային ժամերին 09.00 – 18.00 հետևյալ հասցեով ք. Երևան, Մ. Ադամյան փ. 1, Կառավարական շենք 1, 3-րդ հարկ, 311 սենյակ: Փաստաթղթերը տեղադրված են նաև www.gnumner.am կայքէջում (ոչ ամբողջական):

5. Շահագրգիռ իրավասու մասնակիցները մրցութային փաստաթղթերն ամբողջությամբ Հայերեն լեզվով կարող են ստանալ վերոնշյալ հասցեով՝ վճարելով 50000 ՀՀ դրամ չվերադարձվող գումար: Վճարումն իրականացվում է բանկային փոխանցումով:

Բանկային տվյալներ

Ստացող՝ ԱՖԾԿԿ

ՀՀ ֆինանսերի նախարարություն

Կնետրոնական գանձապետարան

Հաշվի համար: 900000900564

6. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով ամենաուշը **2016 թ -ի հոկտեմբերի 06-ին, ժամը 15:00-ին**: Առաջարկները ***չեն կարող*** ներկայացվել էլեկտրոնային եղանակով: Ուշացված առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները հրապարակայնորեն կբացվեն մրցույթի մասնակիցների

նշանակված ներկայացուցիչների, ինչպես նաև բացմանը ներկա գտնվելու բոլոր ցանկացողների ներկայությամբ ստորև նշված հասցեով:

Որակավորման պահանջները ներառում են.

- Նվազագույն միջին տարեկան շրջանառությունը շինարարության գծով պետք է կազմի **890,000,000** ՀԴ հաշվարկած վերջին հինգ տարիների կտրվածքով:
- վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն մեկ պայմանագիր՝ քաղաքացիական շենքերի վերակառուցման: Ներկայացվող աշխատանքների արժեքը չպետք է պակաս լինի Հայտի գումարից:
- նվազագույնը **60,000,000** ՀՀ

դրամի իրացվելի միջոցներ և/կամ վարկային գիծ,

- հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված "Բնակելի, հասարակական և արտադրական", "Տրանսպորտային" "Հիդրոտեխնիկական", ''Կապի'' և "Էներգետիկակ" լիցենզիաներ:
- Պայմանագիրը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ հիմնական տեխնիկաի առկայություն;
- Ծրագրի ղեկավար/մենեջեր հինգ տարվա աշխատանքաին փորձով նմանատիպ բնույթի և ծավալի շինարարական աշխատանքների, առնվազն երեք տարվա մենեջերի փորձով:

7. Բոլոր առաջարկները պետք է ուղեկցվեն մրցույթի Բանկային Երաշխիքով՝ 20,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարով:

8. Վերոնշյալ հասցեն է՝

ՀՀ ֆինանսների նախարարություն

Մ. Ադամյան փ. 1, Կառավարական շենք 1, 3-րդ հարկ, 324 սենյակ

0010 Երևան, Հայաստանի Հանրապետություն

Հեռ՝ (374-11) 910 381, 910 592

Ֆաքս՝ (374-10) 54 57 08

Գործադիր տնօրեն՝ Էդգար Ավետյան